Հ-30

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՍՏՂԻԿ ՍԵՐԳՈՅԻ

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ
(2000-2008 ԹԹ.)

Է. 00.02 «Համաշխարհային պատմություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ն. Հ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ք.գ.դ., պրոֆ. Գ. Մ. Քեռյան

պ.գ.թ., դոցենտ Գ. Գ. Գևորգյան

Առաջատար կազմակերպություն՝

Խաչատուր Աբովյանի անվան

հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2024թ. հուլիսի 8-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019 Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2024թ. հունիսի 6-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարի վերջին տասնամյակին երկբևեռ աշխարհակարգի փլուզման հետևանքով արտաքին մրցակցության բացակայության պայմաններում ԱՄՆ-ը հնարավորություն ստացավ ձևավորելու միաբևեռ աշխարհակարգ՝ ամերիկյան բացառիկության դրույթներին համապատասխան: Աշխարհաքաղաքական փոխակերպված շահերը կյանքի կոչելու նպատակով ԱՄՆ-ի նախագահական վարչակազմերը փորձեցին զարգացնել Pax Americana մոդելը: ԱՄՆ-ի՝ որպես նոր աշխարհակարգում միանձնյա ու գերակա ուժի և առաջնորդի գաղափարը ձևավորվեց Ջորջ Բուշ ավագի օրոք, փուլային զարգացման ու կայացման բավականին բարդ շրջան անցավ Բիլլ Քլինթոնի կառավարման ընթացքում և իր դրսևորման գագաթնակետին հասավ Ջորջ Բուշ կրտսերի նախագահության տարիներին՝ 2001թ. սեպտեմբերյան ահաբեկչությանը հաջորդած շրջանում՝ արտաքին քաղաքականության իրականացման գործիքակազմի վերաձևակերպմամբ:

Ջ. Բուշ կրտսերի օրոք, ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցավ եթե ոչ ուղենիշների և նպատակների, ապա դրանց իրականացման մեթոդների և եղանակների վերաձևակերպում: Սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո հօդս ցնդեցին ԱՄՆ-ի անխոցելիության պատկերացումները, և Ջ. Բուշ կրտսերի վարչակազմը դրանից անմիջապես հետո պաշտոնապես որդեգրեց «Ահաբեկչության դեմ պատերազմի» (War on Terror) և վերջինիս համատեքստում «Ժողովրդավարության խթանման» (Democracy Promotion) արտաքին քաղաքական ուղղությունները: Արդյունքում, վերանայվեցին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքները, և մշակվեցին դրանց իրագործման մեխանիզմները:

Դրանք արտացոլվեցին ԱՄՆ-ի 2002 և 2006 թվականների ազգային անվտանգության ռազմավարություններում (ԱԱՌ), ինչպես նաև նախագահական և այլ բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներում, որոնք էլ կազմեցին Բուշի դոկտրինի քաղաքական հիմքը: Որպես ընդհանուր արտաքին քաղաքական ուղենիշներ որդեգրվեցին նախկինում տարածաշրջանային մակարդակում փոփոխական արդյունքներ գրանցած ԱՄՆ-ի ռազմական գերակայությունը, միակողմանի քայլերի քաղաքականությունը, կանխարգելիչ հարվածները և ժողովրդավարության խթանումը: Դրանք նորպահպանողականների գաղափարներն էին և իրենց ազդեցությունն ունեցան Բուշի դոկտրինի ձևավորման և սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո ԱՄՆ-ի մերձավորարևելյան, մասնավորապես, իրաքյան ուղղությամբ այդ դոկտրինի ամբողջական գործիքակազմի

կիրարկման հետ նույնացվող տարածաշրջանային քաղաքականության վրա:

2001թ. սեպտեմբերի 11-ից հետո Ջ. Բուշը կրտսերը «պատերազմ» հայտարարեց ահաբեկչությանը: Սա միայն «ալ-Կաիդային» ոչնչացնելու նպատակ չէր հետապնդում: Ջ. Բուշի վարչակազմի նախաձեռնությունը համաշխարհային նշանակություն ուներ, ենթադրում էր վարել ահաբեկչության դեմ պայքար աշխարհի ցանկացած վայրում, պատժել ոչ միայն ահաբեկիչներին, այլև նրանց ապաստան տրամադրող և աջակցող ուժերին՝ լիներ դա անձ, թե՝ պետություն: Ահաբեկչության դեմ մղվող «պատերազմի» շրջանակում զանգվածային ոչնչացման զենքի (այսուհետ՝ ՀՈՀ) դեմ պայքարը ծառայեց որպես ռազմական գործողությունների պաշտոնական հիմնավորում: Եվ չնայած հետագայում հերքվեց Իրաքում ՀՈՀ-ի առկայությունը, ԱՄՆ-ի ռազմարշավը՝ որպես կանխարգելիչ (preventive) կամ այլ գնահատականներով՝ կանխակալ (pre-emptive) գործողություն, տեղի ունեցավ միջազգային իրավունքի միակողմանի մեկնաբանությամբ, որի արդյունքում 2003-2008թթ. Իրաքում ռազմական գործողությունների ծավալման ընթացքում ԱՄՆ-ի ռազմական և օժանդակ ծախսերը կազմեցին հարյուրավոր միլիարդներ (շուրջ 800 մլրդ), իսկ զոհերի և վիրավորների թիվը՝ մոտ 35000:

Նախագահության առաջին շրջանում թույլ տրված արտաքին և ներքին քաղաքական, վարչարարական բնույթի վրիպումները շտկելու փորձ արվեց նախագահության երկրորդ շրջանում՝ ժողովրդավարության խթանմանն առաջնահերթություն տալով և փոխակերպական դիվանագիտության ներդրմամբ, սակայն սա ևս, չնայած որոշ ազատությունների հաստատմանը (ընտրական իրավունք, բազմակուսակցական համակարգ և այլն), տարածաշրջանային խաղաղության երաշխիք չդարձավ: Ընդհակառակը, այդ ընթացքում ավելի սրվեցին ազգամիջյան և կրոնական հակասությունները և պառակտումը՝ Իրաքը տանելով բալկանացման ճանապարհով, մի ուղղությամբ, որտեղից այլևս հետդարձի հնարավորություն չէր լինելու:

Հետազոտության թեմայի արդիականությունը

Բուշի դոկտրինի բովանդակության, ամբողջական կիրարկման և դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրությունն ունի ինչպես քաղաքական, այնպես էլ գիտական և գործնական նշանակություն: Խնդրի ուսումնասիրությունն առանձնահատուկ կարևոր է, քանի որ չնայած ԱՄՆ-ի 43-րդ նախագահ Ջ. Բուշ կրտսերի արտաքին քաղաքականության վերաբերյալ մեծաքանակ գրականության առկայությանը, այնուամենայնիվ, բացակայում է քննվող ժամանակաշրջանի և դրան նախորդող ու հաջորդող նախագահական վարչակազմերի մերձավորարևելյան

քաղաքականության, վերջինիս ձևավորման նախադրյալների, գործիքակազմի և դոկտրինալ հիմնադրույթների համեմատական վերլուծությունը, որի արդյունքում հնարավոր կլիներ վեր հանել ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները և օրինաչափությունները՝ այդ կերպ հնարավորություն ընձեռելով առավել լավ ընկալելու և կանխատեսելու ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության կազմակերպման հիմնական միտումները:

Աշխատանքում ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության համակարգային-կառուցվածքային վերլուծության արդյունքում, բացի արտաքին քաղաքական ուղղությունները պայմանավորող աշխարհաքաղաքական և կամ աշխարհատնտեսական գործոններից, որպես քաղաքականության կազմակերպման և իրականացման գործոն դիտարկվում են նաև ԱՄՆ ներքին քաղաքական գործընթացները և գաղափարական շրջանակների ազդեցությունը: Վերոգրյալն, ինչպես նաև այն հանգամանքը, որ ակադեմիական շրջանակների կողմից բավարար խորությամբ ուսումնասիրված չեն Ջ. Բուշ կրտսերի մերձավորարևելյան քաղաքականությունը և վերջինիս քաղաքական-գաղափարական հիմքերը՝ որպես արտաքին քաղաքականության իրականացման պաշտոնական հիմնավորումներ, արդիական են դարձնում այս աշխատանքը թե՛ պատմագիտության, և թե՛ քաղաքագիտության տեսանկյունից:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Ջ. Բուշ կրտսերի մերձավորարևելյան քաղաքականության իրականացման կամ առավել հստակ՝ Բուշի դոկտրինի կիրառման վերաբերյալ աշխատանքներում հեղինակների ճնշող մեծամասնության վերլուծությունները հիմնականում միակողմանի են և պայմանավորված են նրանց այս կամ այն կուսակցությանը հարելու, տարբեր քաղաքական հայացքներ ունենալու հանգամանքով: Սույն աշխատանքը փորձ է նաև առկա արխիվային նյութերի, տարբեր քաղաքական հայացքներ ունեցող վերլուծաբանների գործերի ուսումնասիրության և համադրման հիման վրա հնարավորինս համապարփակ և օբյեկտիվ վերլուծություն ներկայացնելու:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը հետսառըպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն է Մերձավոր Արևելքում, իսկ առարկան՝ Բուշի դոկտրինի կիրառմամբ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը նրա նախագահության տարիներին:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է Ջ. Բուշ կրտսերի մերձավորարևելյան

քաղաքականության, իսկ ավելի ճիշտ՝ Բուշի դոկտրինի ամբողջական կիրառմամբ իրականացված իրաքյան քաղաքականության ուսումնասիրությամբ և նախորդած ու հաջորդած նախագահական վարչակազմերի տարածաշրջանային քաղաքականության վերլուծության համադրմամբ ներկայացնել ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները, օրինաչափությունները և դիտարկված միտումները:

Ըստ այդմ, ձևակերպվել են հետևյալ խնդիրները.

1. Ցույց տալ միաբևեռայնության ձևավորման շրջանում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության վերաձևակերպման յուրահատկությունները և ներկայացնել քաղաքագիտական շրջանակների կողմից առաջ քաշված տեսակետները վերոնշյալի վերաբերյալ:

2. Վեր հանել սառըպատերազմյան և հետսառըպատերազմյան շրջանի առաջին տասնամյակի այն իրավապայմանագրային հիմքերը, որոնք միաբևեռայնության պայմաններում կազմեցին ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության իրականացումը լեգիտիմացնող գործիքակազմը և բացահայտել նրանց ազդեցության հիմնական ուղղությունները:

3. Դիտարկել և վերլուծել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության կազմակերպման վերաբերյալ նորպահպանողականների քաղաքական-գաղափարական հայացքները և Ջ. Բուշ կրտսերի մերձավորարևելյան քաղաքականության իրականացման վրա դրանց ազդեցությունը, ինչպես նաև վերջինիս տրված քննադատական գնահատականը:

4. Ներկայացնել Բուշի դոկտրինի էությունը և վերջինիս գործիքակազմի կիրարկմամբ կյանքի կոչված մերձավորարևելյան քաղաքականության հիմնական ուղղությունները:

5. Ներկայացնել «Ահաբեկչության դեմ պատերազմի» օրակարգը և, վերջինիս համատեքստում՝ Իրաքում ռազմական գործողությունների ծավալմանը նախորդած և հաջորդած զարգացումների վերլուծմամբ ու համադրմամբ, բացատրել ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության կազմակերպման առանձնահատկությունները,

6. Մեկ տրամաբանական շղթայի մեջ ներկայացնել «Ժողովրդավարության խթանման» քաղաքականությունը և, սառըպատերազմյան շրջանի ու հետսառըպատերազմյան առաջին տասնամյակի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ ժողովրդավարության խնդրի ընկալումների հետ համադրմամբ, ցույց տալ տարածաշրջանային մակարդակում քաղաքական այս ուղղության շարունակականությունը և դրսևորման առանձնահատկությունները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը

Աշխատանքը շարադրելիս կիրառվել են առաջնային (ելույթներ, ուղերձներ, հայտարարություններ, արտաքին քաղաքականությանը և ազգային անվտանգությանը վերաբերող փաստաթղթեր, տեսաձայնագրություններ, որոնք ուղղակիորեն առնչվում են հետազոտության խնդրո առարկային), երկրորդային (հետազոտության առարկային և խնդիրներին առնչվող հոդվածներ, մենագրություններ, վերլուծական աշխատանքներ, ԱՄՆ-ի պատմությանը վերաբերող նյութերի և փաստաթղթերի ժողովածուներ, ատենախոսություններ) և երրորդային (հանրագիտարաններ, բառարաններ, որոնք կարող են դիտարկվել նաև որպես երկրորդային) աղբյուրներ:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը վերոնշյալ աղբյուրների համադրմամբ և դրանց քննական վերլուծությամբ «քեյս-սթադի» (case study) և պատմահամեմատական վերլուծության մեթոդներն են: «Քեյս-սթադի» վերլուծության մեթոդը սահմանվում է որպես մեկ իրադարձության կամ հարակից իրադարձությունների համակարգված հետազոտության փորձ՝ տվյալ երևույթը նկարագրելու և բացատրելու նպատակով: Այն նաև մեկնաբանվում է որպես ստույգ իրադարձության մանրամասն ուսումնասիրություն, «մեկ կամ մի քանի բացատրող և նկարագրող դեպքերի խորը, որակական հետազոտություն»՝ առավել մեծ երևույթի բացատրության և ներկայացման նպատակով[1]: «Քեյս-սթադի» մեթոդի կիրառման պարագայում բուն՝ ներկայացվող դեպքը երկրորդական նշանակություն ունի, քանի որ մեթոդի կիրառման հիմնական նպատակը այլ երևույթի բացահայտումն է[2], որն իրականացվում է տեղեկատվության խաչաձև ստուգման միջոցով առկա խնդրի ամբողջական ընկալմամբ և եզրակացությունների ներկայացմամբ՝ տեղեկատվության մի քանի աղբյուրների համադրումով[3]:

Աշխատանքում ուսումնասիրության առարկան Բուշի դոկտրինի ամբողջական գործիքակազմի կիրառմամբ մերձավորարևելյան, մասնավորապես, իրաքյան քաղաքականության իրականացումն է: Մինչդեռ, առկա արխիվային նյութերի և մասնագիտական գրականության հիման վրա Բուշի դոկտրինի բովանդակության և կիրարկման, վերջինիս գործիքակազմի և դրա ձևավորման նախադրյալների, իրականացման հիմնական ուղղությունների ուսումնասիրության շնորհիվ վեր են

---

[1] Lune H., Berg B. L., Qualitative Research Methods for the Social Sciences, Pearson Education Limited,2017, pp. 170-171.

[2] McNabb D. E., Research methods for political science: quantitative and qualitative approaches /by David E. McNabb. — 2nd ed, York, NY 10017, USA, 2010, p. 237.

[3] Ritchie J. and Lewis J., Qualitative Research Practice: A Guide for Social Science Students and Researchers, London, 2003, p. 65. McNabb D. E., նշվ.աշխ., էջ 236-238:

հանվում և բացատրվում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վարման հիմնական օրինաչափությունները և առանձնահատկությունները, ինչպես նաև փորձ է արվում բացահայտելու ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության տասնամյակների շարունակականությունը:

Պատմահամեմատական հետազոտության մեթոդը խնդրո առարկային հիմնավոր բացատրություններ տալու նպատակով ուսումնասիրում է պատմական իրադարձությունները՝ կա՛մ ուղղակի համեմատելով դրանք, կա՛մ ընթացիկ իրադարձություններին հղում կատարելով: Այս մեթոդը ենթադրում է որոշակի սոցիալական գործընթացների համեմատություն տարբեր ժամանակաշրջաններում և վայրերում: Մեթոդի կիրառման դեպքում առաջնային է համարվում ոչ թե տեսական շրջանակը, այլ այն, թե համեմատության նպատակով ինչ տեսակի հարցեր են առաջ քաշվում[4]: Բուշի դոկտրինի ամբողջական կիրառման միջոցով իրականացված մերձավորարևելյան քաղաքականության ուսումնասիրությամբ աշխատանքում վեր ենք հանել, համեմատել ու համադրել Ջ. Բուշ կրտսերից առաջ և հետո ԱՄՆ նախագահական վարչակազմերի կողմից տարածաշրջանային քաղաքականության իրականացման հիմնական ուղղությունները և եղանակները՝ այդ կերպ պատասխանելով տարածաշրջանային քաղաքականության շարունակականությանը և էվոլուցիոն բնույթին վերաբերող հարցերին:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդներ: Ընդհանուր մեթոդներից կիրառվել են դեդուկցիայի, վերացարկման, անալիզի, սինթեզի, անալոգիայի տեսական հետազոտության մեթոդները: Մասնավոր, այդ թվում նեղ և միջնյուղային գիտական մեթոդներից օգտագործվել են պատմական ու ժամանակագրական պարբերացմամբ պատմական ուսումնասիրության[5], համեմատական[6], համակարգային-կառուցվածքային

[4] Bernhard M. and O'Neill D., Comparative Historical Analysis, Perspectives on Politics, Volume 19, Issue 3, September 2021, pp. 699 – 704, DOI: https://doi.org/10.1017/S1537592721001936, [date accesed: 25.02.2024]. Ferragina E., Comparative Historical Analysis, Policy Evaluation: Methods and Approaches, Author: Edited by Anne Revillard, Québec, 2023, https://scienceetbiencommun.pressbooks.pub/pubpolevaluation/chapter/comparative-historical-analysis/, [date accesed: 25.02.2024].

[5] Lune H., Berg B. L., նշվ. աշխ., էջ 158: Պատմական հետազոտությունը կամ սոցիալական պատմական հետազոտությունը պատմության բաղադրիչների քննություն է: Պատմական հետազոտության մեթոդի նպատակն է տարատեսակ աղբյուրների միջոցով բացահայտել, թե ինչ է տեղի ունեցել անցյալում, և այն միտված է տեսական բացատրություններ տալ պատմական տարբեր իրադարձություններին:

[6] McNabb D. E., նշվ. աշխ., էջ 290-291: Համեմատական վերլուծությունը պետք մաս է կազմի բոլոր այն ուսումնասիրությունների, որոնք ներառում են որակական տվյալներ:

մեթոդները[7]: Ի թիվս վերոնշյալ մեթոդների, հարկ է հավելել, որ, աշխատանքում ներկայացված միջազգային և ներպետական իրավական ակտերի, արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության ռազմավարական փաստաթղթերի ուսումնասիրության համար կիրառվել է բովանդակային վերլուծության (content analysis[8]), ինչպես նաև որակական տվյալների վերլուծության մեկնաբանական մոտեցումը (interpretative approach of qualitative data analysis[9]), իսկ նորպահպանողականների առաջացման, նրանց տարբերակիչ առանձնահատկությունների վերհանման և արտաքին քաղաքականության վրա ունեցած գաղափարական ազդեցության համեմատական ուսումնասիրության համար կիրառվել է որակական տվյալների վերլուծության սոցիալ-մարդաբանական մոտեցումը (social anthropological approach of qualitative data analysis[10]):

Համեմատական վերլուծության գործընթացը որակական տվյալների վերլուծության եզրահանգումների կատարման և ստուգման փուլի մի մասն է: Համեմատական հետազոտությունը երկու կամ ավելի դեպքերի նմանությունների և տարբերությունների ուսումնասիրությունն է: Համեմատական հետազոտություն կատարելիս հետազոտողները համեմատում են որոշակի խնդիր տարբեր համատեքստերում քանակական կամ որակական մոտեցումների միջոցով:

[7] Блауберг И. В., Юдин Э. Г., Садовский В. Н., Системный подход // Новая философская энциклопедия / Ин-т философии РАН; 2010, https://victor-safronov.ru/systems-analysis/glossary/systems-approach.html, [дата обращения: 25.02.2024]. Համակարգային-կառուցվածքային մեթոդը գիտական ճանաչողության մեթոդաբանական ուղղություն է, որի դեպքում ուսումնասիրության օբյեկտը դիտարկվում է որպես համակարգ, փոխկապակցված տարրերի և բաղադրիչների անբաժանելի համալիր, հարաբերությունների, փոխազդող սուբյեկտների և օբյեկտների ընդհանրություն:

[8] Lune H., Berg B. L., նշվ. աշխ., էջ 182: Բովանդակության վերլուծությունը նյութի մանրամասն, համակարգված ուսումնասիրությունը և մեկնաբանությունն է՝ խնդրո առարկա թեմային վերաբերող՝ օրինաչափությունները, ենթադրությունները և իմաստները բացահայտելու համար:

[9] Նույնը: Այս մոտեցումը թույլ է տալիս հետազոտողներին սոցիալական գործողություններին և մարդկային գործունեությանը վերաբերել որպես տեքստի: Հարցազրույցները և դիտողական տվյալները կարող են վերծանվել գրավոր տեքստի վերլուծության համար: Տեքստի մեկնման մոտեցումը մասամբ կախված է հետազոտողի տեսական կողմնորոշումից: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտելու իմաստների, կատեգորիաների և գործողությունների գործնական ըմբռնումը:

[10] McDermott R., Political Psychology, Social Psychology and Behavioral Economics // The SAGE Handbook of Research Methods in Political Science and International Relations edited by Luigi Curini and Robert Franzese, London, 2020, p. 165. Սոցիալ-մարդաբանական մոտեցումն ուսումնասիրում է մարդկային փոխազդեցությունը հասարակություններում: Այն կիրառվում է միջդիսցիպլինար հետազոտությունների դեպքում անձի կամ անձանց ազդեցության և կարգավիճակի ուսումնասիրություն իրականացնելիս: Տվյալ մոտեցումը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել նորպահպանողականների գաղափարախոսության զարգացումը և նրանց ազդեցությունը հասարակական-քաղաքական միջավայրի վրա: Ուսումնասիրությունը

Հետազոտության գիտական նորույթը

Կա տարածված մտայնություն, թե Ջ. Բուշ կրտսերի տարածաշրջանային, այս դեպքում մերձավորարևելյան քաղաքականությունը արտաքին քաղաքական ընկալումների և սկզբունքների հեղափոխություն էր և ԱՄՆ-ի նոր արտաքին գործելակերպ: Ատենախոսությամբ առաջին անգամ փորձ է արվում հնարավորինս համակողմանիորեն ներկայացնել Ջ. Բուշի մերձավորարևելյան քաղաքականությունը, մասնավորապես, Բուշի դոկտրինի ամբողջական գործիքակազմի կիրարկմամբ իրաքյան քաղաքականության առանձնահատկությունները՝ վերջինիս օրինակով բացատրելով սառըպատերազմյան և հետսառըպատերազմյան շրջանի ԱՄՆ-ի նախագահական վարչակազմերի տարածաշրջանային քաղաքականության օրինաչափությունները և դրանց շարունակականությունը:

Սույն աշխատանքով նաև առաջին անգամ իրականացվել է ամերիկյան տարբեր քաղաքական ուղղությունների հետևորդների տարամետ դիրքորոշումների՝ առ այսօր մեզանում չիրականացված գիտական մեկնաբանություն և գնահատում, որը կարևոր է տարածաշրջանային քաղաքականության իրականացման առանձնահատկությունների վերաբերյալ ընկալումների ձևավորման տեսանկյունից:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Ժամանակագրական առումով աշխատանքն ընդգրկում է Ջ. Բուշ կրտսերի նախագահության տարիները՝ սկսած 2000թ. նախագահական ընտրությունների արդյունքում տարած հաղթանակից և նախագահական լիազորությունների պաշտոնական փոխանցման շրջանից մինչև 2008թ.՝ փաստացի ղեկավարման ավարտն ընկած ժամանակահատվածը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ կրտսեր Բուշի մերձավորարևելյան քաղաքականության, ինչպես նաև ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունների համապարփակ վերհանման նպատակով ուսումնասիրվել և համամեմատական վերլուծության է ենթարկվել Ջ. Բուշ կրտսերին նախորդած՝ առավելապես 20-րդ դարի երկրորդ կեսի, ինչպես նաև հաջորդած նախագահների մերձավորարևելյան քաղաքականությանը բնորոշ յուրահատկությունները:

Բուշի դոկտրինի և նորպահպանողականության գաղափարական ակունքների ու էության ներկայացման նպատակով անդրադարձ է կատարվել նաև Թեոդոր Ռուզվելտի

կարևոր է նրանով, որ նորպահպանողական «համոզմունքը» չունի որոշակի սահմաններ, և դրա հետևորդները հաճախ հակադիր դիրքորոշումներ ունեն տարբեր հարցերի շուրջ, այդ թվում՝ արտաքին քաղաքական հարցերի առնչությամբ:

և Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքականության սկզբունքներին՝ այդ կերպ ժամանակագրական շրջանակում ներառելով նաև 20-րդ դարի առաջին երկու տասնամյակները:

Աշխատության տեսական և կիրառական նշանակությունը

Ատենախոսության գիտատեսական նշանակությունն առաջին հերթին պայմանավորված է ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականությունը, մերձավորարևելյան քաղաքականության հայեցակարգային հիմքերը և դրանց ձևավորման արտաքին ու ներքին գործոնները առավել համապարփակ ուսումնասիրելու հրամայականով:

Ատենախոսությունը կարող է ունենալ տեսական և կիրառական նշանակություն ԱՄՆ-ի պատմության, Ջ. Բուշ կրտսերի, ինչպես նաև ԱՄՆ-ի այլ նախագահական վարչակազմերի իրականացրած մերձավորարևելյան քաղաքականության և առանձնահատկությունների ուսումնասիրման և բացահայտման տեսանկյունից: Աշխատանքը նաև կարևորություն է ներկայացնում քաղաքագիտական և պատմագիտական հետազոտությունների իրականացման համար: Աշխատանքում առաջ քաշված դրույթները և եզրահանգումները կարող են օգտակար լինել պատմաբանների, միջազգային հարաբերությունների մասնագետների, արևելագետների, քաղաքագետների համար ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության օրինաչափությունները բացատրելու տեսանկյունից:

Միևնույն ժամանակ աշխատանքը կարող է նաև իր համեստ ներդրումն ունենալ Հայաստանում ամերիկագիտության կայացման գործում:

Աշխատության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը

Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժինը: Ատենախոսության փորձաքննությունն իրականացվել է հեղինակի՝ միջազգային գիտաժողովներում ունեցած մասնակցությամբ, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հավանության արժանացած գրախոսվող գիտական պարբերականներում և հրատարակություններում տպագրված հինգ հոդվածներով:

Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն

Ատենախոսությունը շարադրվել է հայերեն, անգլերեն, ռուսերեն տարբեր աղբյուրների ու գրականության ուսումնասիրության և վերլուծության հիման վրա: Ըստ

արծարծվող խնդիրների՝ օգտագործվել են ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականությանը, Մերձավոր Արևելքի երկրների պատմությանը, էթնոդավանական համայնքներին վերաբերող հոդվածներ, մենագրություններ, ատենախոսություններ, մամուլի հրապարակումներ, Սպիտակ տան մերձավորարևելյան քաղաքականությանը, ահաբեկչության դեմ պայքարին և ժողովրդավարության խթանման վերաբերյալ ԱՄՆ նախագահական և բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներ և ուղերձներ, պաշտոնական հայտարարություններ[11], ՄԱԿ-ի բանաձևեր[12], պատմաքաղաքական ուղղվածության հայալեզու, ռուսալեզու, անգլալեզու հանդեսներ և պարբերականներ[13]: Մշակված մեթոդաբանության տեսանկյունից վերլուծվել են նաև ազգային անվտանգությանն առնչվող փաստաթղթեր[14]: Աշխատանքում օգտագործվել են Բուշ կրտսերի մերձավորարևելյան քաղաքականության ռազմավարական, գաղափարական

[11] George W., Bush Address at Islamic Center of Washington, delivered on 17 September 2001, Washington, D.C., https://www.americanrhetoric.com/speeches/gwbush911islamispeace.htm, [date accessed: 25.02.2024]. President Bush Outlines Iraqi Threat, 7 October, 2002, https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2002/10/20021007-8.html, [date accessed: 25.02.2024]. "Remarks at the American University in Cairo", Secretary Condoleezza R., U.S. Department of State Archive (20June 2005), http://2001-2009.state.gov/secretary/rm/2005/48328.htm, [date accessed: 25.02.2024]. Address by President Carter on the State of the Union Before a Joint Session of Congress, Washington, January 23, 1980, Foreign Relations of the United States, 1977–1980, Volume I, Foundations of Foreign Policy, Historical Documents, pp. 692-699, https://static.history.state.gov/frus/frus1977-80v01/pdf/frus1977-80v01.pdf, [date accessed: 25.02.2024]. President Delivers State of the Union Address, The White House, 29 January 2002, https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2002/01/20020129-11.html, [date accessed: 25.02.2024].

[12] Resolution 661 (1990) of 6 August 1990 of theSecurityCouncil, Iraq-Kuwait, TheUnitedNationsSecurityCouncil, http://unscr.com/en/resolutions/661, [date accessed: 25.02.2024]. Resolution 678 (1990) of 29 November 1990 of The United Nations Security Council, Iraq-Kuwait, The United Nations Security Council, http://unscr.com/en/resolutions/678, [date accessed: 25.02.2024]. Resolution 715 (1991) of 11 October 1991, Iraq, The United Nations Security Council, http://unscr.com/en/resolutions/715, [date accessed: 25.02.2024].

[13] Zunes S., International Law, the UN and Middle Eastern Conflicts // Peace Review: A Journal of Social Justice, 16:3, September 2004, pp. 285-292, http://dx.doi.org/10.1080/10-40265042000278513, [date accessed: 25.02.2024].Gilley B., Did Bush Democratize the Middle East? The Effects of External–Internal Linkages// Political Science Quarterly, Volume 128, Issue 4, Winter 2013, pp. 653–685, https://doi.org/10.1002/polq.12141, [date accessed: 25.02.2024]. Layne Ch., This Time It's Real: The End of Unipolarity and the 'Pax Americana' // International Studies Quarterly, vol. 56, no. 1, Wiley, 2012, pp. 203-213, http://www.jstor.org/stable/41409832, [date accessed: 25.02.2024].

[14]The National Security Strategy of the United States of America (2002), National Security Strategy Archive, September 2002, 60 p.,https://nssarchive.us/wp-content/uploads/2020/04/2002.pdf, [date accessed: 25.02.2024].The National Security Strategy of the United States of America (2006), National Security Strategy Archive, March 2006, 54 p.https://nssarchive.us/wp-content/uploads/2020/04/2006.pdf, [date accessed: 25.02.2024].

և հայեցակարգային հիմքերի և գործիքակազմի վերաբերյալ մեծ թվով արխիվային նյութեր և մասնագիտական գրականություն, որոնց մեծ մասը ուսումնասիրվել և ներկայացվել են նոր լույսի ներքո:

Ատենախոսության մեջ քննվող մի շարք հարցերի, մասնավորապես, Ծոցի առաջին ճգնաժամի, Մերձավոր Արևելքում խաղաղության գործընթացի, Իրաքում ԱՄՆ-ի ռազմական գործողություններ ծավալելու, հետսադդամյան Իրաքում տիրող իրավիճակին և այս ամենի համատեքստում ԱՄՆ-ի վարած քաղաքականությանը վերաբերող հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են նաև հայ արևելագետներ Նիկոլայ Հովհաննիսյանի[15], Ռուբեն Կարապետյանի[16], Արաքս Փաշայանի[17] և այլ հեղինակների[18] աշխատությունները և հրապարակումները:

Միաբևեռայնության ձևավորման շրջանում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության վերաձևակերպման յուրահատկություններն ուսումնասիրելիս օգտագործվել են այնպիսի հեղինակների աշխատանքներ, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում ներկայացնել ամերիկյան քաղաքագիտական մտքում առկա բանավեճը նոր աշխարհակարգի ձևավորման և այնտեղ ԱՄՆ-ի տեղի և դերի մասին: Այս նպատակով ներկայացվում են միջազգային հարաբերությունների և արտաքին քաղաքականության կազմակերպման վերաբերյալ սկզբունքային տարբերություններ ունեցող միջազգային հարաբերությունների երկու տեսությունների՝ քաղաքական ռեալիզմի և նեոլիբերալիզմի (նորազատականություն) ներկայացուցիչների աշխատանքներ: Մասնավորապես, ուշադրություն է դարձվել նեոռեալիզմի և հարձակողական ռեալիզմի ներկայացուցիչներ Քեննեթ Ուոլցի[19] և Ջոն Մերշայմերի[20] աշխատանքներին, որտեղ քննարկվում են նոր

[15] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն: Հատոր III. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005թթ. /. Եր.: Զանգակ-97, 2006թ., 868 էջ:

[16] Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2019թ., 528 էջ:

[17] Փաշայան Ա., Իրաքյան թնջուկ // Հոդվածներ և վերլուծություններ, «Նորավանք» հինադրամ, 05.02.2007, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=819, [հասանելի առ 25.02.2024թ.]: Փաշայան Ա., Միացյալ Նահանգները արաբական աշխարհի տեսանկյունից, «Նորավանք» հիմնադրամ, 17.02.2010, http://www.noravank.am/arm/articles/detail.php-?ELEMENT_ID=4311&sphrase_id=80531, [հասանելի առ 25.02.2024թ].

[18] Հարությունյան Ս., Մերձավորարևելյան զարգացումներ. Վաշինգտոնի քաղաքական որոշումը, «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, № 6 (14), «Նորավանք» հիմնադրամ, ապրիլ, 2007թ., էջ 13-16, https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Globus1/2007/06_2007.pdf, [հասանելի առ 25.02.2024թ.]: Սամվելյան Կ., ՄԱԿ-ը և Իրաքի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողությունների հարցը, Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդներ (XXII), Երևան, Զանգակ-97, էջ 119-128:

[19] Waltz K. N., Structural Realism after the Cold War, International Security, vol. 25, no. 1, The MIT Press, 2000, pp. 5–41, http://www.jstor.org/stable/2626772 , [date accessed: 25.02.2024].

աշխարհակարգի իրողության պայմաններում ԱՄՆ-ի համաշխարհային գերակայող դերի՝ որպես ազգային շահի պահպանման, ապագայում անհրաժեշտ խելամիտ քայլերի անհրաժեշտության, միջազգային դերակատարների հետ փոխգործակցության պատմական փորձի և հետսառըպատերազմյան զարգացման միտումների, ինչպես նաև նոր բևեռների ի հայտ գալու օբյեկտիվ հավանականության հարցեր: Սրան զուգահեռ՝ նորազատականության հետևորդները կարծում էին, որ հետսառըպատերազմյան աշխարհակարգում ԱՄՆ-ի համաշխարհային գերակայության պահպանման հարցում միջազգային նորմերի հիման վրա և միջազգային կառույցների շրջանակներում համագործակցությունն է բերելու տևական խաղաղություն և բարգավաճում՝ ամերիկյան «փափուկ ուժի» կիրառմամբ՝ խուսափելով Սառը պատերազմին բնորոշ ռազմական մեծ ծախսերից: Այս համատեքստում հատկապես կարևոր է առանձնացնել քաղաքագետ, Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Փեյփի[21] և պետքարտուղարության ռազմավարական պլանավորման դեպարտամենտի նախկին տնօրեն Էնն Մարի Սլոթերի[22] աշխատանքները, որոնցում, բացի միջազգային համընդհանուր նորմերի պահպանումից, կարևորվում է վերպետական կառավարման (transgovernmentalism) նշանակությունը, որի պարագայում բոլոր պետություններն իրենց ինքնավարության որոշակի հատված փոխանցելու էին միջպետական մարմինների տնօրինությանը:

Այս ամենին զուգահեռ՝ ներկայացվում է նաև նորպահպանողականության (neoconservatism) ուղղությանը հարող ամերիկյան լրագրող և տեսաբան Չարլզ Կրաութհամերի աշխատանքները ("The Unipolar Moment"[23] և "The Unipolar Moment Revisited"[24]), որոնցից երկրորդը առաջինի վերանայումն է 10 տարի անց՝ Բուշ կրտսերի նախագահության շրջանում ձևավորված իրողության պայմաններում: Չ. Կրաութհամերի աշխատանքներում նոր աշխարհակարգը ներկայացվում է որպես միաբևեռ (unipolar moment, բոց.՝ միաբևեռայնության պահ, շրջան), և քանի որ ՄԱԿ-ը ոչնչի երաշխավորն է, նա անհրաժեշտ է համարում, որ ԱՄՆ-ը հետամուտ լինի գլոբալ միաբևեռ գերակայության հաստատմանը՝ խուսափելու համար քաոսից, քանի որ միայն ԱՄՆ-ը ունի այդպիսի

[20] Mearsheimer J. J., The Future of the American Pacifier, Foreign Affairs, Vol. 80, No. 5 (Sep. - Oct., 2001), pp. 46-61, https://www.mearsheimer.com/wp-content/uploads/2019/07/A0028.pdf, [date accessed: 25.02.2024].

[21] Pape R. A., Soft Balancing against the United States, International Security, vol. 30, no. 1, The MIT Press, 2005, pp. 7–45, http://www.jstor.org/stable/4137457, [date accessed: 25.02.2024].

[22] Slaughter A. M., The Real New World Order, ForeignAffairs, vol. 76, no. 5, Council on Foreign Relations, 1997, pp. 183–184,https://www.jstor.org/stable/20048208, [date accessed: 25.02.2024].

[23] Krauthammer Ch., The Unipolar Moment // Foreign Affairs, vol. 70, no. 1, 1990, (1), pp. 23-33, https://www.jstor.org/stable/20044692, [date accessed: 25.02.2024].

[24] Krauthammer Ch., The Unipolar Moment Revisited, The National Interest, no. 70, Center for the National Interest, 2002, (2), pp. 5–18, http://www.jstor.org/stable/42897438, [date accessed: 25.02.2024].

ռազմաքաղաքական և տնտեսական ներուժ: Միևնույն ժամանակ Չ. Կրաութհամերն ամենևին չէր բացառում երկարաժամկետ պլանում նաև այլ բևեռների ի հայտ գալը:

ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը օրինակարգ դարձնող իրավապայմանագրային հիմքերի ներկայացման և այդ գործիքակազմի դրսևորման հիմնական ուղղությունների ուսումնասիրության նպատակով անդրադարձ է կատարվում այն իրավապայմանագրային հիմքին, որը նպաստեց մերձավորարևելյան տարածաշրջանում ԱՄՆ-ի ամրապնդմանը: Մասնավորապես, կարելի է առանձնացնել արաբ-իսրայելական խաղաղության գործընթացի և «Զսպման դոկտրինի» շրջանակներում Իրաքի վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերը[25]: Հետազոտման տեսակետից նկատելի արժեք է ներկայացնում Արտակ Հովհաննիսյանի[26] և Յուրի Սուրկովի[27] թեկնածուական ատենախոսությունները, որում փաստաթղթային հիմքերի առկայությամբ բավականին մանրամասնորեն ներկայացվում են մերձավորարելյան խաղաղության գործընթացի շրջանակներում բանակցությունները, ձեռք բերված պայմանավորվածությունները[28], ստորագրված փաստաթղթերը և

[25] Resolution 242 (1967) of 22 November 1967 of the Security Council, The Situation in the Middle East, The United Nations Peacemaker, https://peacemaker.un.org/middle-east-resolution242, [date accessed: 25.02.2024]. Resolution 338 (1973) of 22 October 1973 of the Security Council, Ceasefire in the Middle East, The United Nations Peacemaker, https://peacemaker.un.org/middleeast-resolution338, [date accessed: 25.02.2024]. Resolution 660 (1990) of 2 August 1990 of the Security Council, Iraq-Kuwait, The United Nations Security Council, http://unscr.com/en/resolutions/660, [date accessed: 25.02.2024].

[26] Հովհաննիսյան Ա., ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ, թեկնածուական ատենախոսություն, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտ, Երևան 2001թ., 76 էջ:

[27] Сурков Н. Ю., Политика США в Ближневосточном урегулировании в 70-е гг. XX в.-начале XXI в., Диссертация на соискание ученой степени кандидата политических наук Снециальность 23.00.04 - Политические проблемы международных отношений и глобального развития, Московский государственный университет имени М.В. Ломоносова, Институт Стран Азии и Африки, Москва, 2007, 222 с., http://www.dslib.net/glob-razvitie/politika-ssha-vblizhnevostochnom-uregulirovanii-v-70-e-gg-xx-v-nachale-xxi-v.html, [дата обращения: 25.02.2024].

[28] Statement on Diplomatic Talks with the Palestine Liberation Organization, American Presidency Project, December 14, 1988, https://www.presidency.ucsb.edu/documents/statement-diplomatic-talks-with-the-palestine-liberation-organization, [date accessed: 25.02.2024]. Declaration of Principles on Interim Self-Government Arrangements (Oslo Accords), September 13, 1993, The United Nations Peacemaker Official Webpage, https://peacemaker.un.org/israelopt-osloaccord93, [date accessed: 25.02.2024]. Treaty of Peace Between the State of Israel and the Hashemite Kingdom of Jordan signed on 26 October, 1994, The United Nations Peacemaker Official Webpage, https://peacemaker.un.org/israeljordan-peacetreaty94, [date accessed: 25.02.2024]. The Wye River Memorandum signed on 23 October 1998, https://peacemaker.un.org/israelopt-wyerivermemorandum98, [date accessed: 25.02.2024]. Joint statement at the end of Taba negotiations, January 27, 2001. The United Nations, The Question of Palestine, https://www.un.org/unispal/document/auto-insert-206700/, [date accessed: 25.02.2024].

խաղաղության գործընթացում ԱՄՆ-ի ունեցած դերը:

Իրավապայմանագրային հիմքերի ուսումնասիրության համատեքստում կարևորվում է նաև «Զսպման դոկտրինի» շրջանակներում Իրանի (նաև Լիբիայի) նկատմամբ պատժամիջոցների մասին ակտի[29] ընդունումը (դ'Ամատոյի ակտ), որը նախատեսում էր պատժամիջոցների կիրառում Իրանում ներդրում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Նմանօրինակ ակտի առկայությունը միաբևեռայնության համատեքստում ի ցույց էր դնում միջազգային իրավունքի նկատմամբ սեփական ներպետական իրավունքի գերակայությանը հասնելու ԱՄՆ-ի՝ որպես միակ բևեռի միտումը:

Գլխում ի թիվս այլ նյութերի լայնորեն մեկնաբանվում են հետսառըպատերազմյան առաջին տասնամյակում ԱՄՆ-ի նախագահների ելույթները նոր աշխարհակարգի և խաղաղության գործընթացի վերաբերյալ[30], ինչպես նաև ներկայացվում է ԱՄՆ-ի պետքարտուղարության փորձագետների կողմից կազմված «Foreign Relations of the United States, 1969–1976, Volume XXV, Arab-Israeli Crisis and War, 1973» ժողովածուն, որում տեղ են գտել խաղաղության գործընթացին առնչվող մի շարք գաղտնազերծված փաստաթղթեր և նամակներ[31]:

Նորպահպանողականների՝ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության կազմակերպման վերաբերյալ քաղաքական-գաղափարական հիմունքների ներկայացման և Ջ. Բուշ կրտսերի մերձավորարևելյան քաղաքականության իրականացման վրա դրանց ազդեցության բացահայտման նպատակով օգտվել ենք նորպահպանողականության ակունքներում կանգնած սոցիոլոգ և քաղաքագետ Մարտին Լիպսեթի[32] և Իրվինգ Քրիստոլի[33] աշխատանքներին, որոնք հնարավորություն

[29] Public Law 104–172—AUG. 5, 1996, Iran and Libya Sanctions Act, https://www.congress.gov/104/plaws/publ172/PLAW-104publ172.pdf, [date accessed: 25.02.2024].

[30] After The War: The President // Transcript of President Bush's Address on End of the Gulf War, The New York Times, March 7, 1991, The New York Times, https://www.nytimes.com/1991/03/07-/us/after-war-president-transcript-president-bush-s-address-end-gulf-war.html, [date accesed: 25.02.2024]. President Bush annual UN address. 23 September 1991, 46th session of the UN General Assembly, https://2009-2017.state.gov/p/io/potusunga/207269.htm, [date accessed: 25.02.2024].

[31] Foreign Relations of the United States, 1969–1976, Volume XXV, Arab-Israeli Crisis and War, 1973 // US Department of State, Office of the Historian, https://history.state.gov/historicaldocu-ments/frus1969-76v25 , [date accessed: 25.02.2024].

[32] Lipset S. M., American Exceptionalism: A Double Edged Sword // The Washington Post, 1996, https://www.washingtonpost.com/wp-srv/style/longterm/books/chap1/americanexceptionalism.htm, [date accessed: 25.02.2024].

[33] Kristol I., The Neoconservative Persuasion // Washington Examiner, 25 August, 2003, https://www.washingtonexaminer.com/weekly-standard/the-neoconservative-persuasion, [date accessed: 25.02.2024].

են տալիս նորպահպանողականների առաջին սերնդի ներկայացուցիչների տեսակետից ընկալելու այդ «համոզմունքի» էությունը:

Դիտարկվել է նաև քաղաքագետներ Բրայան Շմիդտի և Մայքլ Ուիլլիամսի հոդվածը[34], որում Իրաքում ռազմական լայնածավալ գործողությունների մասին տարբեր փաստարկների, ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության կազմակերպման և իրաքյան պատերազմի հետևանքների վերաբերյալ մոտեցումների «բանավեճը» ներկայացված է քաղաքական ռեալիզմի և նորպահպանողականության սկզբունքների համեմատական վերլուծության միջոցով:

Առանձնակի ուշադրության է արժանացել նախկին նորպահպանողական, փիլիսոփա, քաղաքագետ Ֆրենսիս Ֆուկույամայի աշխատանքը[35], որը քննադատական վերլուծության է ենթարկում նորպահպանողականների՝ արտաքին քաղաքականության կազմակերպման մոտեցումները և սկզբունքները:

Կարևորվել է նաև հարձակողական ռեալիզմի տեսության հիմնադիր Ջոն Մերշայմերի «Hans Morgenthau and the Iraq war: realism versus neo-conservatism» հոդվածը[36], որտեղ ներկայացվում է նորպահպանողականության և իդեալիզմի միջև փոխադարձ կապը, մասնավորապես՝ վիլսոնականության ազդեցությունը նորպահպանողականության գաղափարների ձևավորման վրա՝ հատկապես ժողովրդավարության տարածման և ամերիկյան [բարոյական] գերակայության հաստատման առումով:

Հետխորհրդային հեղինակներից առանձնակի ուշադրության է արժանացել նաև ռուս քաղաքագետ Սերգեյ Կիսլիցինի մենագրությունը[37], որում լուսաբանված են Ջ. Բուշ կրտսերի նախագահության տարիներին նորպահպանողականների գաղափարական ազդեցության, քաղաքական որոշումներ կայացնողների շրջանակի վրա նրանց ազդեցության գնահատման, սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո արտաքին քաղաքական մոտեցումների վերանայման հիմնահարցերը:

[34] Schmidt B. C. & Williams M. C., The Bush Doctrine and the Iraq War: Neoconservatives Versus Realists // Security Studies, 17:2, 2008, pp. 191-220, https://doi.org/10.1080/-09636410802098990, [date accessed: 25.02.2024].

[35] Фукуяма Ф., Америка на распутье: Демократия, власть и неоконсервативное наследие / Фрэнсис Фукуяма; пер. с англ. А. Георгиева. — М.: АСТ: АСТМОСКВА: ХРАНИТЕЛЬ, 2007. — 282 с.

[36] Mearsheimer J. J., Hans Morgenthau and the Iraq war: realism versus neo-conservatism, 18.05.2005, https://www.opendemocracy.net/en/morgenthau_2522jsp/, [date accessed: 25.02.2024].

[37] Кислицын С. В., Мир посредством силы: внешнеполитическая идеология и практика американского неоконсерватизма / ИМЭМО РАН. – М.: Изд-во «Весь Мир», 2020. –216 с..

Հետաքրքրություն է ներկայացնում նաև մերձավորարևելյան քաղաքականության մշակման և խաղաղության գործընթացի վերաբերյալ նորպահպանողականների լիքուդամետ մոտեցումները ներկայացնող ամերիկացի քաղաքագետ, իսրայելական Լիքուդ կուսակցության նախկին խորհրդական և American Enterprise Institute-ի խորհրդի նախկին անդամ Ռիչարդ Փերլի ղեկավարությամբ՝ ամերիկյան առաջատար ուղեղային կենտրոնների մասնագետներ Ջեյմս Կոլբերտի, Չարլզ Ֆեյրբենքսի, Դուգլաս Ֆեյթի և այլոց մասնակցությամբ կազմված քաղաքական բնույթի առաջարկների աշխատանքային փաստաթղթի ուսումնասիրումը[38], որն իսրայելա-պաղեստինյան խաղաղության գործընթացի և ԱՄՆ-ի ու Իսրայելի կողմից անհրաժեշտ ռազմավարության մշակման մասին է և արտահայտում է մերձավորարևելյան քաղաքականության իրականացման նորպահպանողական մոտեցումները: Այս համատեքստում, Ջ. Բուշ կրտսերի օրոք նորպահպանողականների և Իսրայելի առնչություններին անդրադառնում է նաև Գագիկ Հարությունյանը[39], ըստ որի ԱՄՆ-ի աջակցությունը իր մերձավորարևելյան դաշնակցին պայմանավորված էր ոչ միայն և ոչ այնքան իսրայելական լոբբիի առկայությամբ, որքան Սպիտակ տան բողոքական-բապտիստական մեծամասնությամբ և նրանց՝ Հին Կտակարանին հավատարիմ մնալու փաստով, ինչն էլ հորջորջվում էր որպես «քրիստոնեական սիոնիզմ»:

Ջ. Բուշ կրտսերի արտաքին քաղաքականության իրականացման գործում նորպահպանողականների սկզբունքներին չհետևելու վերաբերյալ քննադատական վերլուծության տեսանկյունից հատկապես արժեքավոր է ամերիկյան քաղաքագետ Մաքս Բուտի աշխատանքի ուսումնասիրությունը[40], որում ներկայացվում էր գոնե գործնական մակարդակում Ջ. Բուշի վարչակազմի՝ նորպահպանողականների սկզբունքներին չհետևելու փաստը: Աշխատաքում նաև ընդգծվում է նորպահպանողականության դերի անհարկի շահարկումն և ուռճացումը քաղաքական ընդդիմադիրների կողմից և կարծիք արտահայտվում, որ Բուշի վարչակազմի՝ նորպահպանողականության գաղափարներին իրապես հետևելու դեպքում (օրինակ՝

[38] Perle R., Colbert J., Fairbanks Ch., Jr., Feith D., Loewenberg R., Wurmser D., and Wurmser M., "A Clean Break: A New Strategy for Securing the Realm", Study Group on "A New Israeli Strategy Toward 2000", Institute for Advanced Strategic and Political Studies, July 2006, p. 3, https://web.archive.org/web/20140125123844/http://www.iasps.org/strat1.htm, [date accessed: 25.02.2024].

[39] Հարությունյան Գ., ԱՄՆ ռազմավարության որոշ դրույթները իրաքյան հիմնախնդրի համատեքստում // «21-րդ ԴԱՐ», թիվ 3(5), 2004, էջ. 105-132, http://www.noravank.am/-upload/pdf/219_am.pdf, [հասանելի առ 25.02.2024թ.]:

[40] Boot M., Think Again: Neocons // Foreign Policy, no. 140 (Jan. - Feb., 2004), pp. 20-28, https://www.jstor.org/stable/4147516, [date accessed: 25.02.2024].

Իրանի և Հյուսիսային Կորեայի նկատմամբ տարվող քաղաքականության պարագայում) ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը չէր լինի բավական «հանդուրժող»:

Բուշի դոկտրինի էությունը և վերջինիս կիրարկմամբ իրականացված մերձավորարևելյան քաղաքականությունը առանձնակի ուշադրությամբ է ներկայացվել Օլեգ Կոլոբովի և Յուլիա Տումինայի համահեղինակած հոդվածում[41], որում ներկայացվում են Բուշի դոկտրինի հիմնադրույթները: Ջ Բուշ կրտսերի մերձավորարևելյան քաղաքականության հիմնական ուղղությունների և դրանց արդյունավետության քննադատական վերլուծության տեսանկյունից հատկապես կարևոր է Ջերեմի Պրեսմանի աշխատանքը[42]: Առանձնակի ուշադրության է արժանացել նաև Վահրամ Պետրոսյանի աշխատանքը Ջ. Բուշ կրտսերի մերձավորարևելյան քաղաքականության բնույթի, վերջինիս առանձնահատկությունների և իրաքյան պատերազմը որպես կանխակալ պատերազմ հիմնավորելու տեսանկյունից[43]:

Առանձնահատուկ ուշադրությամբ ուսումնասիրվել է «Նոր ամերիկյան դար նախագիծ» (Project for the New American Century - PNAC) ուղեղային կենտրոնի նամակը նախագահ Բ. Քլինթոնին որպես ԱՄՆ արտաքին քաղաքականության առաջնահերթություն Ս. Հուսեյնին իշխանությունից հեռացնելու ռազմավարության մշակման և իրականացման վերաբերյալ[44]՝ ինչը լրացուցիչ ապացույց է առ այն, որ Իրաք ներխուժումը պայմանավորված չէր միայն սեպտեմբերյան ահաբեկչության փաստով:

«Ահաբեկչության դեմ պատերազմի» և վերջինիս համատեքստում՝ Իրաքում ռազմական գործողությունների ծավալման և ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականության կազմակերպման առանձնահատկությունների ներկայացման տեսանկյունից առանձնակի ուշադրության են արժանացել Ջ. Բուշի ելույթները, որոնք ներկայացված են մեկ ընդհանուր ժողովածուով: Մասնավորապես, կանգ է առնվում 2003

[41] Колобов О. А., Тумина Ю. В., Доктринальные основы внешней политики США при администрациях Дж. Буша-мл и Б. Обамы // Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского, 2012, № 1 (1), с. 277–284, https://cyberleninka.ru/article/n/doktrinalnye-osnovy-vneshney-politiki-ssha-pri-administratsiyah-dzh-busha-ml-i-b-obamy, [дата обращения: 25.02.2024].

[42] Pressman J., Power without Influence: The Bush Administration's Foreign Policy Failure in the Middle East, International Security, Vol. 33, No. 4 (Spring, 2009), pp. 149-179, https://www.jstor.org/stable/40207155, [date accessed: 25.02.2024].

[43] Պետրոսյան Վ., Ջորջ Բուշ Կրտսեր (արտաքին քաղաքանության մի քանի հղացքների մասին) // Պատմություն և գիտություն: Գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 1-2, 2005թ., էջ 115-124:

[44] Letter to President Clinton on Iraq, Project for the New American Century, January 26, 1998, http://web.archive.org/web/20020407024015/http://www.newamericancentury.org/iraqclintonletter.htm, [date accessed: 25.02.2024].

և 2006 թվականների ԱԱՌ-ների[45]՝ որպես ահաբեկչության դեմ «պատերազմի» և ժողովրդավարության խթանման արտաքին քաղաքական ուղղությունների առաջնային փաստաթղթային հիմքերի ուսումնասիրության վրա: Փաստաթղթային հիմքերի ուսումնասիրության տեսանկյունից ուշադրության են արժանի Մեննինգի, Դաունինգ Սթրիթի և Բուշ-Ազնար դռնփակ հանդիպումների՝ Իրաքի դեմ ռազմական գործողությունների ծավալումից հետո համաշխարհային մամուլում տարածված գաղտնազերծված և չհերքված բովանդակությամբ արձանագրությունները[46]:

Առանձնակի ուսումնասիրվել է Վլադիմիր Տրիբրատի թեկնածուական ատենախոսությունը[47] Բուշ կրտսերի վարչակազմի արտաքին քաղաքականության մեջ ահաբեկչության խնդրի վերաբերյալ: Ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարության վերաբերյալ արժեքավոր է Դեյվիդ Հաստինգս Դանի աշխատանքը[48], իսկ Թրևոր Թրալի և էրիկ Գյոփների համահեղինակած աշխատանքում ներկայացվում են ԱՄՆ-ի նախագահի վարչակազմի կողմից ահաբեկչության դեմ պայքարում թույլ տրված բացթողումները[49]: Կարևորվել է նաև բռնությունների աճի թեժ պահին՝ 2006թ. Իրաք գործուղված Բեյքեր-Համիլթոնի հանձնաժողովի (Iraq Study Group) աշխատանքային եզրակացությունների և քաղաքական առաջարկների ուսումնասիրությունը՝ հատկապես, որ սա ԱՄՆ-ի ռազմական ներխուժումից հետո Կոնգրեսի հանրապետականների և դեմոկրատների միջև առաջին շոշափելի ազգային համագործակցության ձևաչափն էր[50]:

[45] The National Security Strategy of the United States of America (2002). The National Security Strategy of the United States of America (2006).

[46] Donvan N. Jr., Bush Was Seton Path to War, British Memo Says, The New York Times, March 27, 2006, https://www.nytimes.com/2006/03/27/world/europe/bush-was-set-on-path-towar-british-memo-says.html, [date accessed: 25.02.2024]. Ekaizer E.,"Llegó el momento de deshacerse de Sadam", Actadel a conversación entre George W. Bush y José María Aznar | Crawford, Tejas, 22 de Febrero de 2003, El Pais, 26 SEPT 2007, https://elpais.com/diario/2007/09/26/-espana/1190757601_850215.html, [date accessed: 25.02.2024]. Cole J., Bush-Aznar Transcript: The War Crime of the Century, Informed Comment, 09/28/2007, https://www.juancole.com/-2007/09/bush-aznar-transcript-war-crime-of.html, [date accessed: 25.02.2024].

[47] Трибрат В. В., Проблематика терроризма во внешней политике администрации Дж. Буша-младшего, Диссертация кандидата политических наук: 23.00.04; [Место защиты: Ин-т Соединенных штатов Америки и Канады РАН].-Москва, 2008.- 215 с.: ил. РГБОД, 61 08-23/175.

[48] Dunn D. H., Bush, 11 September and the Conflicting Strategies of the 'War on Terrorism', Irish Studies in International Affairs, Vol. 16, 2005, pp. 11-33, https://www.jstor.org/stable/30001932, [date accessed: 25.02.2024].

[49] Thrall T. and Goepner E., Step Back: Lessons for U.S. Foreign Policy from the Failed War on Terror, CATO Institute, 26 June, 2017, https://www.cato.org/policy-analysis/step-back-lessons-us-foreign-policy-failed-war-terror, [date accessed: 25.02.2024].

[50] Baker J. A. III and Hamilton L. H., Co-Chairs Lawrence S. Eagleburger, Vernon E. Jordan, Jr., Edwin Meese III, Sandra Day O'Connor, Leon E. Panetta, William J. Perry, Charles S. Robb, The

Բուշի վարչակազմը թեպետ սկզբից քննադատեց Հանձնաժողովի եզրակացությունները, սակայն այնուամենայնիվ ստիպված եղավ հաշվի նստել դրանց հետ՝ մասնավորապես ամերիկյան զորքերի դուրսբերման առումով: Իրաքի էթնոդավանական համայնքների միջև Իրաք պետության ապագա կառուցվածքի վերաբերյալ հակասությունների ներկայացման տեսանկյունից առանձնակի ուշադրության է արժանի ամերիկյան նախկին դիվանագետ Փիթեր Գալբրայթի «The End of Iraq: How American Incompetence Created a War Without End»[51] աշխատանքը:

«Ժողովրդավարության խթանման» քաղաքականության և ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ ժողովրդավարության խնդրի ընկալումների, նշանակության, դրսևորումների և դերի ուսումնասիրության տեսանկյունից պետք է առանձնացնել նաև քաղաքագետներ Լուիզա Ռոդրիգես Մաթեոյի աշխատանքը[52] և Աբդուլլահ բին-Օդայի թեկնածուական ատենախոսությունը[53]:

Ժողովրդավարության խթանման քաղաքականության ու «դոմինոյի տեսության» կապի և ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ վերջինիս կիրառման ուսումնասիրության տեսանկյունից կարևորվում է ռուս քաղաքական վերլուծաբան Ալեքսեյ Զոբնինի հոդվածը[54]: Ահաբեկչության դեմ պատերազմում ժողովրդավարության խթանման դերի և փոխակերպական դիվանագիտության ներկայացման տեսանկյունից հարկ է առանձնացնել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի հյուսիսամերիկյան հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող Ալեքսեյ Դավիդովի թեկնածուական ատենախոսությունը[55]:

Iraq Study Group Report, 5 December, 2006, 160p., https://www.govinfo.gov/content/pkg/GPO-IRAQSTUDYGROUP/pdf/GPO-IRAQSTUDYGROUP.pdf, [date accessed: 25.02.2024].

[51] Galbraith P., The End of Iraq: How American Incompetence Created a War Without End, New York, 2006, 288 p..

[52] Rodrigues Mateo L., The changing nature and architecture of U.S. democracy assistance // Revista Brasileira de Política Internacional, pp. 1-19, https://www.scielo.br/j/rbpi/a/QdbB3qt-CQcwRWZZGXZGQqnk/?format=html&lang=en, [date accessed: 25.02.2024].

[53] Bin-Odah A.,U.S. foreign policy in the Middle East and the Bush war on terror: elite opinion and the failure of U.S. strategy, The University of Sheffield, October 2006, 343p., https://etheses.whiterose.ac.uk/4216/1/434613_vol1.pdf, https://etheses.whiterose.ac.uk/4216/4/434613_Vol2.pdf, [date accessed: 25.02.2024].

[54] Зобнин А., Теория домино в научном дискурсе // Международныепроцессы, Том 14, № 2, 2016., стр. 65-77, http://intertrends.ru/system/Doc/ArticlePdf/1582/hJRGg5nHOm.pdf, [дата обращения: 25.02.2024].

[55] Давыдов А. А., «Продвижение демократии» во внешней политике США в начале XXI века, Диссертация на соискание ученой степени кандидата политических наук, Специальность: 23.00.04 – Политические проблемы международных отношений, глобального и регионального развития, Федеральное государственное бюджетное научное учреждение «Национальный

«Ահաբեկչության դեմ պատերազմի» և «Ժողովրդավարության խթանման» ուղղությունների ուսումնասիրության տեսանկյունից ուշադրության են արժանի Նախագահ Ջ. Բուշ կրտսերի, պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի և այլ պաշտոնատար անձանց ելույթները[56], ինչպես նաև արտաքին գերատեսչական և անվտանգային մարմինների տարեկան հաշվետվությունները[57]:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ յուրաքանչյուրը երկուական ենթագլխով, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

исследовательский институт мировой экономики и международных отношений имени Е. М. Примакова Российской академии наук», Москва – 2019, 199с., –https://www.imemo.ru/-files/File/ru/dis/2019-001-Davydov-DIS.pdf, [дата обращения: 25.02.2024].

[56] President Bush Delivers Graduation Speech at West Point, Office of the Press Secretary, June 1, 2002, https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2002/06/20020601-3.html, [date accessed: 25.02.2024]. Transformational Diplomacy, Secretary Condoleezza Rice, Georgetown University, Washington, DC, January 18, 2006, The US Department of State Archive, https://2001-2009.state.gov/secretary/rm/2006/59306.htm, [date accessed: 25.02.2024]. U.S. Secretary of State Colin Powell Addresses the U.N. Security Council, February 5, 2003, https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2003/02/20030205-1.html, [date accessed: 25.02.2024]. Former US military adviser David Kilcullen says there would be no Isis without Iraq invasion. David Kilcullen advised General David Petraeus on countering the Iraq insurgency, The Independent, 04 March 2016, https://www.independent.co.uk/news/world/middle-east/iraq-war-invasion-caused-isis-islamic-state-daesh-saysus--military-adviser-david-kilcullen-a6912236.html, [date accessed: 25.02.2024]. "No ISIS if we didn't invade Iraq": David Kilcullen interview, Channel 4 News, Mar 2, 2016, https://www.youtube.com/watch?v=gkncP8gkXPg , [date accessed: 25.02.2024].

[57] Annual Threat Assessment of the Director of National Intelligence for the Senate Select Committee on Intelligence, John D. Negroponte - Director of National Intelligence, Washington, D.C., 02/02/2006, National Intelligence Council, 26 p., https://fas.org/irp/congress/2006_hr/020206-negroponte.pdf, [date accessed: 25.02.2024]. Comprehensive Report of the Special Advisor to the DCI on Iraq's WMDs, with Addendums (Duelfer Report) Vol.2, Key Findings, Wahsington, D.C., 30 September 2004, 207 p., https://www.govinfo.gov/content/pkg/GPO-DUELFERREPORT/pdf/GPO-DUELFERREPORT-2.pdf, [date accessed: 25.02.2024]. Future of Iraq: Under Secretary for Economic, Business, and Agricultural Affairs, Testimony Before the Senate Foreign Relations Committee, June 4 2003, https://2001-2009.state.gov/e/rm/2003/21267.htm, [date accessed: 25.02.2024]. Iraq's Continuing Programs for Weapons of Mass Destruction // National Intelligence Estimate, October 2002, 96 p., https://nsarchive2.gwu.edu/NSAEBB/NSAEBB129/nie.pdf, [date accessed: 25.02.2024]. New State Department Releases on the "Future of Iraq" Project, National Security Archive Electronic Briefing Book No. 198, September 1, 2006, https://nsarchive2.gwu.edu/NSAEBB/NSAEBB198/index.htm , [date accessed: 25.02.2024]. Patterns of Global Terrorism 2001/2002, United States Department of States, Homeland Security Digital Library at NPS, 204 p., https://www.hsdl.org/?view&did=1012 , May 2002, [date accessed: 25.02.2024].

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են օբյեկտը, առարկան, աշխատանքի նպատակն ու խնդիրները, հետազոտության գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական շրջանակը, ներկայացվում են աշխատության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը կրում է **«ԱՄՆ-Ի ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ»** վերնագիրը: Առաջին ենթագլխում՝ վերնագրված **«Միաբևեռ աշխարհակարգի ձևավորումը ըստ Pax Americana հայեցակարգի և դրսևորումը Մերձավոր Արևելքում»**, քննության են առնվում և մեկնաբանվում հետսառըպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վերաիմաստավորման շուրջ քաղաքագիտական բանավեճերը և նոր աշխարհակարգի պայմաններում ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները և իրականացման ուղենիշները: Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված **«ԱՄՆ-ի հետսառըպատերազմյան շրջանի մերձավորարևելյան քաղաքականության լեգիտիմացման իրավական հիմքերը»**, բացահայտվում է նաև այն իրավապայմանագրային գործիքակազմը, որն իր գոյությամբ լեգիտիմացրեց ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը՝ աշխարհակարգային նոր իրողությունների պայմաններում:

Ատենախոսության՝ **««ԲՈՒՇԻ ԴՈԿՏՐԻՆԻ» ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ»**, վերնագրով երկրորդ գլխի առաջին ենթագլխում (**«ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության իրականացման նորպահպանողականների մոտեցումները»**) ուսումնասիրվել և ներկայացվել են Ջ. Բուշ կրտսերի օրոք մերձավորարևելյան քաղաքականության գաղափարախոսական հիմքը կազմող նորպահպանողականության տարբերակիչ առանձնահատկությունները, ակունքները, նրանց հայաքները ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության կազմակերպման հարցում, Ջ. Բուշի մերձավորարևելյան քաղաքականության վրա նորպահպանողականների ունեցած ազդեցությունը և վերջինիս տրված քննադատական գնահատականը: Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում (**«Բուշի դոկտրինի գործիքակազմը և կիրառման ուղղությունները Մերձավոր Արևելքում»**) ներկայացվում են Բուշի դոկտրինի գործիքակազմը, վերջինիս բնույթի վերաբերյալ առկա կարծիքները և Բուշ կրտսերի նախագահության տարիներին ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության հիմնական ուղղությունների ընդհանուր գնահատականը:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է **««ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ» և «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ» ՓՈՐՁԵՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ**

ԱՐԵՎԵԼՔՈՒՄ (ԻՐԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)»: Նրա **««Ահաբեկչության դեմ պատերազմը» որպես Ջորջ Բուշ կրտսերի օրոք Մերձավոր Արևելքում ամերիկյան ազդեցության հաստատման միջոց»** վերնագիրը կրող առաջին ենթագլխում ներկայացվել են «Ահաբեկչության դեմ պատերազմի» համատեքստում Իրաքյան կամպանիայի նախապատրաստական փուլը, ռազմական գործողությունների ծավալմանը նախորդած ներքին և արտաքին քաղաքական բանավեճերը, «Ահաբեկչության դեմ պատերազմի» շրջանակում Իրաքյան կամպանիայի խթան հանդիսացած գործոնները, Բեյքեր-Համիլթոնի հանձնաժողովի եզրակացությունները և տարածաշրջանային ռազմավարությանը նոր թափ հաղորդելու փորձերը: Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված **««Ժողովրդավարության ներդրումը» որպես ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության գերակա ուղղություն և վերջինիս առանձնահատկությունները»**, ներկայացված են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մինչև Ջ. Բուշ կրտսերի օրերը ամերիկյան արտաքին քաղաքական դոկտրիններում ժողովրդավարության խթանման խնդիրը, սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո ժողովրդավարության ներդրման, խթանման և կյանքի կոչման առանձնահատկություններն ու հետևանքները, ինչպես նաև փոխակերպական դիվանագիտության էությունը:

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության հիմնական և առանցքային դրույթներն ու եզրահանգումները.

- Հուգահեռներ անցկացնելով ամերիկյան քաղաքագիտական շրջանակների կողմից հետսառըպատերազմյան առաջին տասնամյակում ԱՄՆ-ի՝ որպես միակ գերտերության արտաքին քաղաքականության համար առաջարկվող գործելակերպի և մոտեցումների, մյուս կողմից՝ այդ շրջանում ամերիկյան քաղաքական շրջանակների իրականացրած տարածաշրջանային, մասնավորապես մերձավորարևելյան քաղաքականության միջև՝ կարելի է գալ այն եզրակացությանը, որ ամերիկյան ղեկավար շրջանակները միաբևեռայնության ձևավորման շրջանում դեռևս գտնվում էին սեփական արտաքին քաղաքականության վերաիմաստավորման փուլում, և, ի տարբերություն քաղաքագիտական շրջանակների, քաղաքական վերնախավը չուներ նոր իրողությունների պայմաններում միջազգային ճգնաժամերին արձագանքելու և նոր տարածաշրջանային կարգ ձևավորելու գործողությունների և քայլերի հստակ ռազմավարություն:

Նույն կերպ Բուշ կրտսերի վարչակազմի որդեգրած ՀՈՀ-ի դեմ պայքարի, «Ահաբեկչության դեմ պատերազմի» և «Ժողովրդավարության խթանման» քաղաքական ուղղությունները գործնական մակարդակում երբևէ միաժամանակ նույն վայրում չէին կիրառվել և բովանդակային առումով ուղղակիորեն հակասում էին միմյանց: Սպիտակ

տունը ժողովրդավարությունը «խթանելիս» հիմնվում էր կոշտ ուժի, այն էլ՝ հետախուզական տվյալների ոչ պատշաճ վերլուծությամբ ընտրողաբար և միակողմանի կիրառման վրա, որն էլ ավելի բացահայտեց Մերձավոր Արևելքում գործողությունների հստակ պլանի բացակայության խնդիրը: Սա է գալիս փաստելու նաև այն, որ Ջ. Բուշի նախագահության երկրորդ շրջանում, երբ արդեն առաջնայնությունը տրվել էր «ժողովրդավարության խթանմանը», անցումն Իրաքում «Մեծ ալիքի» ռազմավարությանը և ցամաքային զինուժի ավելացումը ևս մեկ անգամ ընդգծեցին հստակ ռազմավարության բացակայությունը և տարածաշրջանային քաղաքականության իրավիճակային կամ ad hoc բնույթը:

- Արաբ-իսրայելական հակամարտության և Իրաքի վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերը, խաղաղության գործընթացի շրջանակներում ձեռք բերված համաձայնությունները, նաև «Հսպման դոկտրինի» ներքո ընդունված ԱՄՆ-ի ներպետական իրավական ակտերը, որ կազմեցին հետսառըպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի մերձավորարևելյան ներգրավվածությունը լեգիտիմացնող իրավապայմանագրային հիմքը, նաև ձևավորեցին ահաբեկչության ու ՀՈՀ-ի տարածման դեմ պայքարի, ինչպես նաև ժողովրդավարության խթանման քաղաքական ուղղությունները՝ այդ կերպ երաշխավորելով ԱՄՆ-ի հետագա ներգրավվածության շարունակական հիմնավորումը:
- Միաբևեռայնության ձևավորումից ի վեր ԱՄՆ-ի դերը Մերձավոր Արևելքի քաղաքական հիմնախնդիրների առնչությամբ, մասնավորապես, ԱՄՆ-ՄԱԿ փոխգործակցության առումով, երկակի էր. Ծոցի առաջին ճգնաժամի ընթացքում Իրաքի դեմ ռազմական գործողությունները իրականացրին կոալիցիոն ուժերը՝ ԱՄՆ-ի առաջնորդությամբ՝ ՄԱԿ-ի մանդատի ներքո, ինչը պայմանավորված էր Ծոցում իրականացվող ԱՄՆ-ի քաղաքականության վերաիմաստավորմամբ, ինչպես նաև տեղի արաբ առաջնորդների հետ հարաբերությունները չվատթարացնելու անհրաժեշտությամբ: Մինչդեռ խաղաղության գործընթացի բանակցություններում ԱՄՆ-ի միջնորդությամբ ձեռք բերված պայմանավորվածությունները և ԱՄՆ-ի դիրքորոշումը մի շարք հարցերի վերաբերյալ փաստացի գերակայություն ունեին ՄԱԿ-ի բանաձևերի նկատմամբ:

Ինչ վերաբերում է Բուշի դոկտրինի կիրարկմանը, ապա ԱՄՆ-ի երկակիություն արտահայտվեց ոչ միայն տարածաշրջանի մյուս երկրների հետ հարաբերություններում, այլ դրսևորվեց հենց խնդրո առարկա իրաքյան քաղաքականության իրականացման ընթացքում: Այսպես, Ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթերով կանխարգելիչ գործողություններն ամրագրվեցին որպես բարոյական հրամայական, և ԱՄՆ-ն՝ առանց ՄԱԿ-ի թույլտվության, միակողմանիորեն «լեգիտիմացրեց» Իրաք ներխուժումն «ահաբեկչության դեմ պատերազմի» շրջանակներում՝ միջազգային

իրավունքի ընտրողաբար մեկնաբանությամբ միակողմանի գործողություններն Իրաքում ներկայացնելով որպես հիմնական կանոն, այլ ոչ թե բացառություն: Մինչդեռ, 2003-2004թթ. Իրաքի վերականգնման, պետական կառավարման մարմինների ձևավորման, Սահմանադրության մշակման և բազմազգ կոնտինգենտի միջոցով Իրաքում անվտանգության կազմակերպումն իրականացվում էր ԱՄՆ-ի գլխավորությամբ, բայց արդեն ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերի հիման վրա:

- Նոր ձևավորվող միաբևեռայնության շրջանում ի հայտ եկան ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության իրականացման թիրախի նկատմամբ կոշտ պատժամիջոցների կիրառման նախադրյալները: Դրանք արտահայտվեցին երկու ուղղություններով. առաջինը՝ «Հսպման դոկտրինի» շրջանակներում ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերի միջոցով Իրաքի դեմ տնտեսական, քաղաքական և ռազմական պատժամիջոցների սահմանումն էր, իսկ երկրորդը՝ նույն դոկտրինի շրջանակներում սեփական ներպետական ակտերը համաշխարհային կանոնակարգերի վերածելու միտումն էր, որի առաջին արտահայտումը 1990-ականներին Իրանի և Լիբիայի նավթարդյունաբերության ոլորտում և ենթակառույցներում ներդրումներ կատարած և առևտուր իրականացնող ԱՄՆ-ի և այլ պետությունների ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պատժամիջոց սահմանող ակտերն էին: Այս մոտեցման ակունքները հասնում էին մինչև Վուդրո Վիլսոնի լիբերալ արտաքին քաղաքականության վրա հիմնված կոլեկտիվ անվտանգության ապահովման սկզբունքներին, և մինչ օրս կիրառվում է ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության թիրախների դեմ՝ հաճախ սահմանափակելով կամ բացասաբար ազդելով նաև երրորդ երկրների և նրանց քաղաքացիների շահերի վրա: Տարածաշրջանային քաղաքականության այս և վերոնշյալ իրավապայմանագրային հիմքերը լիովին արտահայտում էր նոր աշխարհակարգում ամերիկյան Pax-ի հիմնադրույթներին կյանքի կոչման համատեքստում ԱՄՆ-ի գերակայության ձգտումները:

- Սեպտեմբերյան ահաբեկչության արդյունքում Ջ. Բուշ կրտսերի վարչակազմը վերածևակերպեց մերձավորարևելյան քաղաքականության իրականացման գործիքակազմը և շեշտադրումները: Նախագահի վարչակազմն՝ իր ընկալմամբ ԱՄՆ-ի շահերի բավարարման տեսանկյունից՝ հիմնվելով նորպահպանողականության սկզբունքների վրա, փորձ արեց նոր շունչ հաղորդել ամերիկյան Pax-ի հայեցակարգին՝ ազգաշինության, միակողմանի քաղաքականության, ռազմական ուժի գերակայության, կանխարգելիչ կամ ավելի շուտ՝ կանխակալ հարվածների ու ժողովրդավարության խթանման միջոցով, որն ամբողջովին դրսևորվեց միայն Իրաքի նկատմամբ:

Արդյունքում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության վերահմաստավորման նպատակով տեղի ունեցավ արտաքին քաղաքականության իրականացման թիրախի

կերպափոխում: Ինչ վերաբերում է մերձավորարևելյան քաղաքականության իրականացման հիմնանպատակին, ապա այն դարձավ թիրախի առաջացրած սպառնալիքի և իրավիճակի կառավարումը տարածաշրջանում: Գաղափարական մակարդակում սա կապված էր նորպահպանողականների «համոզմունքների» հետ, որոնց քաղաքական գաղափարների տասնամյակների կենսունակությունը շարունակում է գլխավորապես պայմանավորված մնալ թշնամու կամ հնարավոր սպառնալիքի գոյությամբ և անփոփոխ է մինչ օրս:

- Չնայած նորպահպանողականության գաղափարական դրույթների վրա ձևավորված Բուշի դոկտրինի շրջանակներում իրականացված ռազմական գործողությունները Իրաքում արժանացան Ջ. Բուշ կրտսերին հաջորդած նախագահների քննադատությանը, նրանք ևս զերծ չմնացին վերոնշյալ դրույթներին հետևելու գայթակղությունից: Դա արտահայտվեց վերջիններիս օրոք որոշումների ընդունման գործընթացում կրտսեր Բուշի վարչակազմում ժամանակին ընդգրկված նորպահպանողականության հետևորդների ներգրավմամբ, Մերձավոր Արևելքում կանխարգելիչ և ընտրողական ուժի կիրառմից չհրաժարվելով, ինչպես նաև՝ արտաքին քաղաքականության և անվտանգության ռազմավարական փաստաթղթերում և պաշտոնական հայտարարություններում, որտեղ կարելի է հանդիպել ԱՄՆ-ի միակողմանի քաղաքականության, վերջինիս համաշխարհային գերակայությամբ միաբևեռ աշխարհակարգի պահպանման վերաբերյալ ձևակերպումների՝ որտեղ՝ որպես Բուշի դոկտրինից մնացած ժառանգություն առանցքային դեր ունեն ահաբեկչության դեմ պայքարը և ժողովրդավարական արժեքների խթանումը:

- Ջ. Բուշ կրտսերի օրոք ազգային անվտանգության ռազմավարությամբ առաջին անգամ ամրագրվեց կանխակալման (preemption) քաղաքականությունը, որը, չնայած մշտապես եղել էր ամերիկյան արտաքին քաղաքականության զինանոցում, սակայն միաբևեռայնության շրջանում պաշտոնապես ներկայացվեց որպես ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության իրականացման առանցքային մոտեցում: Նեղ և գործնական իմաստով կանխակալումը ենթադրում էր որևէ սպառնալիքի կամ նրա հետ կապված հանգամանքների համակարգային վերացում: Իրաքի պարագայում սպառնալիքը պետության կողմից ահաբեկիչներին ՀՈՀ-ի փոխանցումն էր: Առանց այս բաղադրատարրի ահաբեկչության դեմ պայքարը պարզապես կլիներ ԱՄՆ-ի ներքին անվտանգության խնդիր: Կարելի է եզրակացնել, որ անվտանգային սպառնալիքների համաշխարհայնացմամբ ԱՄՆ-ը փորձ արեց ընտրված թիրախի դեմ միակողմանի կանխարգելիչ գործողություններում ձևավորել աջակից պետությունների շրջանակ, ու լեգիտիմացնել կոշտ ուժի կիրառումը՝ պատասխանատվության բեռը բաշխելով դաշնակիցների վրա: Սա, ըստ էության, Ջ. Մերշայմերի «պատասխանատվության

բաշխման» ռազմավարության իրագործումն էր (buckpassing strategy), որը ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ ունի շարունակական միտում:

Այս համատեքստում, շարունակելով վերոնշյալ միտքը և հաշվի առնելով Իրաքում ՀՈՀ-ի չհայտնաբերումը, վերջինիս դեմ պայքարը առաջարկում ենք չդիտարկել կանխարգելիչ կամ կանխակալ հարվածների լույսի ներքո որպես առանձին ուղղություն, այլ համարել ահաբեկչության դեմ պատերազմի հիմնավորում-բաղադրատարր ընդամենը՝ խնդրո առարկա թեմային վերաբերող հետագա ուսումնասիրություններում այն բացառելով ԱՄՆ արտաքին քաղաքական հիմնական ուղղությունների շարքից:

- Ահաբեկչության դեմ պատերազմը՝ որպես տարածաշրջանային քաղաքականության իրականացման գործիք, բացահայտեց ԱՄՆ-ում մերձավորարևելյան քաղաքականության կազմակերպման հիմնական ձախողումները: Նախևառաջ այն վեր հանեց համաշխարհային և արտաքին քաղաքական առաջնահերթությունների վերաբերյալ Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր ընդհանուր օրակարգ մշակելու հարցում ներքաղաքական կոնսոլիդացման ձախողումը ընդդիմադիր և իշխանական ուժերի միջև. դեմոկրատները չներառվեցին արտաքին ռազմավարության մշակման գործընթացում: Փոխարենը՝ նրանց ընդգրկեցին արդեն իսկ քաղաքացիական պատերազմում գտնվող Իրաքի ուսումնասիրությամբ զբաղվող հանձնաժողովի աշխատանքներում, որի քաղաքական առաջարկները, սակայն, կոշտ գծի կողմնակիցների աջակցությամբ Ջ. Բուշ կրտսերը մերժեց: Երկրորդ՝ ահաբեկչության դեմ պատերազմին բնորոշ էր ռազմական գործողությունների թիրախի կամ պայքարի առաջնահերթությունների (ահաբեկիչներ, ահաբեկիչներին աջակցող պետություններ, ամերիկացիներից դժգոհ սուններ, ապա կրկին՝ ահաբեկիչներ) պարբերական փոփոխությունը: Կարելի է եզրակացնել, որ Բուշի դոկտրինի ամբողջական կիրառման և հիմնավորման գործում ԱՄՆ-ը ձախողեց նեղ թիրախավորումը և տարածաշրջանային իրադրության պայմաններում ընտրված թիրախի ներուժի ամբողջական գնահատումը:

- Ժողովրդավարության ներդրման և խթանման քաղաքականությունը, որ ըստ ամերիկյան քաղաքական-գաղափարական շրջանակների գործելու էր դոմինոյի սկզբունքով, և որի տիպաբանական ակունքներն ըստ էության և բովանդակության բխում էին երկբևեռ աշխարհակարգի տրամաբանությունից, երբեք էլ չի դիտարկվել որպես արտաքին քաղաքականության վերջնանպատակ, այլ ժամանակ առ ժամանակ կիրառվել է որպես տարածաշրջանային քաղաքականության իրականացման գործիք՝ կախված տվյալ ժամանակահատվածում ժողովրդավարության ներդրմանը և խթանմանը տրված բովանդակությունից և նշանակությունից: Ուստի, արտաքին հավասարազոր ուժի սպառնալիքի բացակայության պայմաններում կոմունիզմի դեմ պայքարի, «իսլամական հեղափոխության» արտահանման բացառման, իսկ ապա՝ ահաբեկչության և

ծայրահեղականության դեմ պայքարի հիմնասյուների վրա ձևավորված այս «մեսսիայական» առաքելությունը մեծ հաշվով միջոց էր վերահիմաստավորելու Մերձավոր Արևելքում ամերիկյան արտաքին քաղաքականությունը:

Ահաբեկչության դեմ պայքարի միջոցով քաղաքական ու տնտեսական ազատություն հաստատելու և ժողովրդավարացման առերևույթ նպատակ հետապնդող դոկտրինն իր վախճանն ամրագրեց 2006թ. ԱԱՌ-ով, որով փաստացի արձանագրվեց «ահաբեկչության դեմ պատերազմի» ոչ արդյունավետ լինելը՝ առաջին պլան մղելով ժողովրդավարության ներդրումը և խթանումը: «Ազատության օրակարգի» շրջանակներում փոխակերպական դիվանագիտությունը եկավ շտկելու իրավիճակն՝ ամերիկյան ներկայացվածության առավել լայն ցանցի ստեղծման և փափուկ ուժի կիրառման միջոցով: ԱՄՆ դիվանագիտության իրականացման առարկա դարձավ ոչ միայն տվյալ երկրի արտաքին քաղաքական կացությանը, այլև դրան հավասար՝ նրա ներքին քաղաքական կյանքը: Ըստ էության՝ դա այլ երկրների ներքին կյանքին միջամտելու նորպահպանողական մոտեցումների, իսկ ավելի կոնկրետ՝ Դ. Էյզենհաուերի՝ կոմունիզմի դեմ պայքարի գործիքակազմի արդի դրսևորումն էր:

- Լինելով արաբական Մերձավոր Արևելքի մանրակերտը՝ Իրաքը դարձավ Բուշի դոկտրինի բոլոր չորս հիմնասյուների կյանքի կոչման թատերաբեմ: «Ահաբեկչության դեմ պատերազմը» և կոշտ ուժի կիրառմամբ «Ժողովրդավարության խթանման» քաղաքականությունը հանգեցրին «ալ-Կաիդայի» և ծայրահեղական այլ խմբավորումների աշխարհագրության ընդլայնմանը ու հակաամերիկյան տրամադրությունների խորացմանը, իսկ հետսադդամյան Իրաքի վերակառուցման ձախողումն այն վերածեց ահաբեկչության օջախի:

Թեպետ երկբևեռ աշխարհակարգի տրամաբանության և նորպահպանողականների երբեմն հակասական գաղափարական հայացքների վրա ձևավորված կաղապարված դոկտրինը՝ չնայած տարածաշրջանում գրանցած որոշակի ձեռքբերումների, ճկուն և արդյունավետ չեղավ ամերիկյան Pax-ի լիակատար հաստատման տեսանկյունից, այնուամենայնիվ Բուշի և նրան հաջորդած նախագահական վարչակազմերը՝ ի դեմս դոկտրինի կիրարկման հետևանքով հրահրված իսլամական ծայրահեղականության և ահաբեկչության սպառնալիքի, հնարավորություն ստացան հիմնավորելու և ապահովելու տարածաշրջանում ԱՄՆ-ի շարունակական ներկայությունը:

1. Հայրապետյան Ա., Միաբևեռայնության ձևավորումը ըստ Pax Americana հայեցակարգի (մերձավորարևելյան քաղաքականության օրինակով) // «Գիտական աշխատություններ», XXI հատոր, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2018թ., էջ 148-157:
2. Հայրապետյան Ա., Բուշի դոկտրինը Մերձավոր Արևելքում. կիրառումը և հետևանքները // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազգային գիտաժողովի (Գյումրի, 27-29 սեպտեմբերի) նյութեր /ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն; Եր.: «Գիտություն», 2019թ., էջ 132-137:
3. Հայրապետյան Ա., ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականության հիմնական ուղղությունները Ջորջ Բուշ կրտսերի նախագահության տարիներին (2001-2009թթ.) // «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն,մշակույթ» հոդվածների ժողովածու, հատոր XIV, Երիտասարդ արևելագետների միջազգային 40-րդ գիտաժողով (Աղվերան, հունիսի 29-30), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2019թ., էջ 125-137:
4. Հայրապետյան Ա., ԱՄՆ-ի հետսառըպատերազմյան շրջանի մերձավորարևելյան քաղաքականության իրավապայմանագրային հիմքերի շուրջ // «Գիտական աշխատություններ», հատոր 2 (23), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2020թ., էջ 134-148:
5. Hayrapetyan A., Manifestations of Neoconservatismin US Middle East Policy During the Presidency of George W. Bush (2001-2009) // Contemporary Eurasia, Volume IX (1) Institute of Oriental Studies of NAS RA, Yerevan 2020,pp. 68-86.
6. Հայրապետյան Ա., «Ահաբեկչության դեմ պատերազմը»՝ որպես Մերձավոր Արևելքում ամերիկյան ազդեցության հաստատման միջոց Ջորջ Բուշ կրտսերի օրոք // «Լրաբեր հասարակական գիտությունների», Համար 1 (2021), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2021թ., էջ 52-70:
7. Hayrapetyan A.,Peculiarities of the US policy of "Democracy promotion" under George W. Bush // "Scientific Works", vol. 1 (26), Shirak Center for Armenological Studies of NAS RA, Gyumri, 2023, pp.153-164.

Айрапетян Астхик Сергоевна

ВНЕШНЯЯ ПОЛИТИКА США НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ (2000-2008 ГГ.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история».
Защита состоится 8 июля 2024 года в 12:00 на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения Национальной Академии Наук РА (0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Исследование содержания доктрины Буша, особенностей ее полной реализации и проявления имеет как политическое, научное, так и практическое значение. Несмотря на наличие большого количества литературы по внешней политике Джорджа Буша-младшего, исследование проблемы особенно важно, так как отсутствует сравнительный анализ ближневосточной политики Буша-младшего, а также реализуемой предыдущей и последующей за ним президентскими администрациями, предпосылок ее формирования, инструментов и доктринальных основ, в результате которого можно было бы выделить особенности и закономерности региональной политики США, тем самым предоставив возможность лучшепонять и спрогнозировать основные тенденции в организации региональной политики США.

В результате системно-структурного анализа региональной политики США, помимо геополитических и/или геоэкономических факторов, определяющих внешнеполитические направления, в качестве фактора организации и реализации политики США рассматриваются также внутриамериканские политические процессы и влияние идеологических рамок. Вышеизложенное, а также тот факт, что ближневосточная политика Дж. Буша-младшего и ее политико-идеологические основы как официальные обоснования проведения внешней политики не изучены достаточно глубоко в академических кругах,делают данную работу актуальной как с точки зрения историографии, так и политологии.

В то же время следует отметить, что анализы работ подавляющего большинства авторов по реализации ближневосточной политики Дж. Буша-младшего или, точнее, по применению доктрины Буша, в целом однобоки и являются результатом их

принадлежности к одному или другой партии, имеющей разные политические взгляды. Поэтому данная работа представляет собой попытку представить максимально полный и объективный анализ, основанный на изучении и сравнении существующих архивных материалов, работ аналитиков разных политических взглядов.

Диссертация состоит из введения, трёх глав по два пункта в каждой, заключения и списка использованных источников и литературы.

Во введении обосновывается актуальность темы исследования, указывается объект, предмет, цель и задачи работы, научная новизна исследования, хронологические рамки исследования, представлены экспертиза и официальное одобрение работы, а также краткая теория использованных источников и литературы.

Первая глава диссертации называется "Тенденции изменения политики США на Ближнем Востоке в 1990-е годы". В первом пункте, озаглавленном "Формирование однополярного мирового порядка согласно концепции Pax Americanaи проявления на Ближнем Востоке", рассматриваются и интерпретируются политологические дебаты о реинтерпретации внешней политики США в период после "холодной войны", а также особенности региональной политики США и направлении ее реализации в условиях нового мирового порядка. Во втором пункте, озаглавленном "Правовые основы легитимации ближневосточной политики Соединенных Штатов в период после холодной войны", раскрывается тот юридический инструментарий, который узаконил ближневосточную политику Соединенных Штатов с ее существованием в условиях новых глобальных реалий.

В первом пунктевторой главы диссертации озаглавленной "Реализация доктрины Буша на Ближнем Востоке" ("Подходы неоконсерваторов к реализации ближневосточной политики США"), изучены и представлены отличительные черты неоконсерватизма, истоки и их причины в формировании ближневосточной политике США, являющиеся идеологической основой ближневосточной политики во времена Дж.Буша-младшего, а также влияние неоконсерваторов на ближневосточную политику Буша и критическая оценка последней.

Во втором пункте второй главы ("Инструментарий доктрины Буша и направления ее применения на Ближнем Востоке") представлен инструментарий доктрины Буша, современные взгляды на ее природу и общая оценка основных направлений ближневосточной политики США в годы президентства Буша-младшего.

В третьей главе диссертации ""Война против терроризма"и попытки "Внедрения демократии"на Арабском Востоке (на примере Ирака)" рассматриваются особенности политики США в войне с терроризмом на Ближнем Востоке.

В первом пункте третьей главы ""Война против терроризма" как средство установления американского влияния на Ближнем Востоке в период президентства Джорджа Буша-младшего" рассматривается подготовительный этап иракской кампании в контексте "войны против терроризма", внутри-и внешнеполитические дебаты, предшествующие военным операциям, факторы, послужившие толчком для иракской кампании в рамках "Войны против терроризма", выводы Комиссии Бейкера-Гамильтона и попытки придать новый импульс региональной стратегии. Во втором пункте, озаглавленном ""Внедрение демократии" как доминирующего направления региональной политики США и ее особенности", представлена проблема продвижения демократии в американских внешнеполитических доктринах после второй мировой войны до периода президентства Дж. Буша-младшего, продвижения и реализации демократии после сентябрьских терактов, а также природа трансформационной дипломатии.

В конце диссертации представлены выводы автора, вытекающие из анализа глав работы и список использованных источников и литературы.

Hayrapetyan Astghik Sergo

US FOREIGN POLICY IN THE MIDDLE EAST (2000-2008)

Dissertation for the degree of Candidate of Historical Sciences in specialty 07.00.02 "World History".
The defense will take place on July 8, 2024 at 12:00, at a meeting of the specialized council 006 "World History" operating at the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

The analysis of the Bush Doctrine, the features of its full implementation and manifestations holds significant political, scientific, and practical importance. Despite the extensive literature on George W. Bush's foreign policy, there is a substantial gap in the comparative analysis of the Middle East policies (and their formative factors, tools and doctrinal foundations) implemented by George W. Bush and the preceding and subsequent US presidential administrations. A comprehensive analysis of these aspects would enable a clearer identification of the peculiarities and patterns of US regional policy, thereby facilitating a better understanding and anticipation of the main trends in US regional policy.

As a result of the systemic-structural analysis of the US regional policy not only geopolitical and/or geo-economic factors but also domestic US political processes and ideological frameworks' impact have been considered as policy development and implementation determinants. The abovementioned as well as the fact of insufficient academic research on G. W. Bush Middle East policy and its political-ideological foundations as official justifications for foreign policy implementation make this work relevant from both historiographical and political science perspectives.

At the same time, it's important to note that analysis of the works of the vast majority of authors on G. W. Bush Middle East policy, or, more precisely, on the application of the Bush Doctrine in the Middle East, are generally one-sided and influenced by authors' political affiliations and views. Therefore, this work also aims to provide a comprehensive and impartial analysis based on the study and comparison of existing archival materials and the works of analysts with diverse political perspectives.

The dissertation is structured into an Introduction, three chapters with two sub-chapters each, a conclusion, and a comprehensive list of sources and literature used.

The introduction serves to substantiate the relevance of the research topic, clearly outlining the object, subject, purpose, and objectives of the work. It also emphasizes the scientific novelty of the research, establishes the chronological framework of the study, and presents the examination and official approval of the work. Additionally, it provides a brief overview of the sources and literature used.

The first chapter of the dissertation is titled "Trends in Changes in US Middle East Policy during the 1990s." The first sub-chapter, titled "The Formation of a Unipolar World Order According to the Pax Americana Concept and its Manifestation in the Middle East," explores and analyzes the political science debate over the rethinking of post-Cold War US foreign policy. It also discusses the characteristics of US regional policy and the flagships for its implementation in the new world order. The second sub-chapter, titled "Legal Bases of the US Post-Cold War Middle East Policy Legitimization," delves into the legal mechanisms that justified the United States' Middle East policy within the context of emerging global realities.

In the first sub-chapter of the second chapter of the dissertation titled "Implementation of the Bush Doctrine in the Middle East" (Neoconservative Approaches to the Implementation of US Middle East Policy), the distinguishing features of neoconservatism, serving the ideological basis for G. W. Bush's Middle East policy are presented. The study delves into the origins of neoconservatism, their views on the organization of Middle East policy, and the influence of neoconservatives on G. W. Bush's Middle East policy and provides a critical assessment of the latter. The second sub-chapter of the second chapter ("Toolkit of the Bush Doctrine and Directions for Its Application in the Middle East") presents the toolkit of the Bush Doctrine, existing opinions on its nature, and offers a robust assessment of the key directions of US Middle East policy under G. W. Bush.

The third chapter of the dissertation, titled "The 'War on Terror' and Attempts at 'Democracy Promotion' in the Arab East (in the example of Iraq)," examines the specific aspects of US policy in the war on terrorism in the Middle East. The first sub-chapter, "The 'War on Terror' as a Means of Asserting American Influence in the Middle East under George W. Bush," delves into the preparatory phase of the Iraq campaign within the context of the "War on Terror." It discusses the domestic and foreign policy debates preceding military operations, the factors that prompted the Iraq campaign in the context of the "War on Terror," as well as the findings of the Baker-Hamilton Commission and attempts to revitalize the regional strategy. The second sub-chapter, titled "'Democracy Promotion' as a Priority Direction of US Regional Policy and its Peculiarities," addresses the issue of democracy promotion in American foreign

policy from the post-World War II era to the days of Bush Jr. It explores democracy promotion and implementation after the 9/11 terrorist attacks, its features and implications, and the nature of transformative diplomacy.

At the end of the dissertation, the author presents conclusions drawn from the analysis of the chapters, along with a list of used sources and literature.